ԴՈՒ ԼՌԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ՝ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՅՏՆՎԵԼՈՎ. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՀԵՏՔ-ԻՆ

27.08.2016 12:13

Հարցազրույց «Հետք» լրատվականին

Մեր քաղաքացիներից, թերևս, քչերն են տեղեկացված՝ Աստված ոչ անի, անազատության մեջ հայտնվելով, ունեն լռելու իրավունք:

Ամերիկյան ֆիլմերում հաճախ ենք լսում. «Դուք կարող եք պահպանել լռությունն, քանի որ այն, ինչ կասեք, կարող է օգտագործվել Ձեր դեմ դատարանում» նախադասությունը:

Լռելու իրավունքը կամ Միրանդայի կանոնը արդար դատաքննության անկյունաքարերից մեկն է, երբ ազատությունից զրկված քաղաքացին կարող է իր ու իր մերձավոր հարազատների վերաբերյալ որևէ տվյալ չհայտնել:

Միրանդայի կանոն անվանումը առաջ է եկել 1966-ին ԱՄՆ-ում, «Միրանդան ընդդեմ Արիզոնայի» գործով, երբ ամերիկյան դատարանը սահմանեց՝ անազատության մեջ գտնվողի հայտնած ցանկացած ինֆորմացիա չի կարող համարվել թույլատրելի ապացույց, քանի դեռ նրան չեն բացատրվել իր իրավունքները: Այս իրավունքը չի սահմանափակում պարզապես անձին տեղեկացնելով իր իրավունքի մասին, այլ պետք է պարզաբանի՝ այն, ինչ անձը կասի, կարող է օգտագործվել նրա դեմ դատարանում: Այս գործից հետո մեկ մյուսի հետևից աշխարհի տարբեր երկրներ օրենքով ամրագրեցին քաղաքացու՝ լռելու իրավունքը:

Այս իրավունքի նպատակը ազատությունից զրկված քաղաքացու նկատմամբ ճնշումների կամ պարտադրանքի բացառումն է, անմեղության կանխավարկածի բաղադրատարրերից մեկը, քանի որ անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, այլ պետությունը պետք է ապացուցի, որ վերջինը մեղավոր է:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկայում մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը դիտվում են որպես արդար դատաքննության իրավունքի և անմեղության կանխավարկածի բաղադրիչներ (6–րդ հոդվածի 1–ին և 2–րդ մասեր):

Մեր երկրի նախկին Սահմանադրությամբ, հոդված 22-ը նախատեսում էր՝ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Սակայն 2015 թ-ի դեկտեմբերի 5-ի սահմանադրական փոփոխություններով, ի թիվս մարդու այլ իրավունքների, սահմանափակվել է նաև լռելու իրավունքը: Այսպես՝ Սահմանադրության հոդված 65-ն ասում է. «Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ»:

Հարցական է մնում, թե ինչպես և ով պետք է չափի ու որոշի՝ որն է ողջամիտ ենթադրելիության սահմանը:

Լռելու իրավունքի սահմանափակման ու դրա հետևանքների վերաբերյալ մի շարք հարցերի պատասխանները ստանալու ակնկալիքով դիմեցի փաստաբաններին:

Փաստաբանների պալատի անդամ, հանրային պաշտպան Արմինե Ֆանյանի կարծքիով, ողջամտության շեմը պետք է գնահատի ցուցմունք չտալու իմունիտետից օգտվողը, քանի որ այլ պայմաններում այդ իրավունքը կլիներ պատրանքային: «Ստացվում է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է, այնուամենայնիվ, լսեր այդ ցուցմունքը, որպեսզի գծեր ողջամտության սահմանը»,- նկատեց փաստաբան Ֆանյանը՝ նշելով, որ վարույթն իրականացնող մարմինը

որևէ կերպ այդ իրավունքը սահմանափակելու մեխանիզմ չի էլ գտնի, քանի որ ակնկալվելիք ցուցմունքի բովանդակությունն այդպես էլ չի իմանա:

Փաստաբաններից Երվանդ Վարոսյանը «Հետքին» փոխանցեց, որ Լռելու իրավունքի սահմանափակման հարցը ևս փաստաբանների կողմից բարձրացվել է Սահմանադրության նախագծի քննարկումների ժամանակ, երբ շատ փաստաբաններ հրապարակավ դեմ էին արտահայտվում նախագծին: Վարոսյանը սահմանադրական այս նորմի փոփոխությունից հետո արդեն երկու քրեական գործերի հետ առնչություն է ունեցել. քրեական գործեր են հարուցվել ցուցմունքից հրաժարվելու համար, սակայն գործերը կարճվել են, քանի որ ակնհայտ փաստեր են եղել, որ ցուցմունք տալուց հրաժարված անձինք նույն քրեական գործերով եղել են փաստացի կասկածյալներ:

ՀՀ փաստաբանների պալատի անդամներից Գարիկ Մալխասյանն էլ «Հետքին» հայտնեց, որ դեռ նման խնդիր չի ունեցել: Վերջերս մի դեպքով անձը հրաժարվել է ցուցմունք տալուց' պատճառաբանությամբ որ իր կարծիքով իր կողմից ցուցմունք տալու դեպքով հնարավոր է, որ իր դեմ օգտագործի, քանի որ եղել է դեպքի վայրում: Նորմալ ընդունել են:

Փաստաբան Նորայր Նորիկնյանն էլ ասաց, որ նման նախադեպ չի ունենցել, բայցևայնպես չի պատկերացնում, թե ինչպես կարող է աշխատել սահմանադրության այս սահմանափակումը:

Փաստաբան Վարոսյանը գտնում է, որ այս սահմանափակումը ընտրովի արդարադատության դրսևորում կարող է ունենալ. «Ցավոք, ինչպես այս, այնպես էլ նմանատիպ այլ անորոշ ձևակերպումների պարագայում գործելու է պատասխանատվության կանխավարկածը, և իրավակիրառ պետական մարմիններն օգտագործելու են սա որպես մահակ՝ ընտրովի պատասխանատվության ենթարկելով այն անձանց, ում ցանկանան»:

Լիպարիտ Սիմոնյանն էլ պարզաբանեց, որ քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն, ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ: Այսինքն՝ անձն իրեն վերաբերող որևէ հանգամանքի մասին իրավունք ունի ցուցմունք չտալ՝ սկսած իր անուն- ազգանունից, վերջացրած՝ իր վերաբերյալ տեսածի ու լսածի մասին»,- ասում է Լիպարիտ Սիմոնյանը:

Լուսինե Սահակյանի կարծիքով էլ, որպեսզի անձը ողջամտի կամ ընդհանրապես կարողանա ենթադրություններ անել, պետք է ծանոթ լինի գործին: «Առանց ծանոթ լինելու, ելակետային որևէ տվյալ չունենալով՝ ինչպես պետք է ենթադրություն անես»:

Ինչ վերաբերում է փոփոխված Սահմանադրությանը 65-րդ հոդվածին, ապա փաստաբան Սիմոնյանը մտահոգություն ունի՝ սովորական քաղաքացին ինչպես կարող է կանխատեսել, թե «իր որ գործողությունները կամ անգործությունը՝ ողջամտորեն կամ չգիտեմ ոնց կարող են կամ չեն կարող օգտագործվել իր դեմ: Մի հատ էլ մինչև հարցաքննվելը պիտի իրավաբանական կրթություն ստանա, դիպլոմ վերցնի, մի 2 տարի էլ դատախազ աշխատի, որ ողջամտորեն կանխատեսի: Դե՛, թող մի 8 տարի սպասեն, նոր հարցաքննեն»,- նկատում է փաստաբան Սիմոնյանը:

Փաստաբանները նշում էին, որ հարյուրավոր արձանագրություններ կարող են ցույց տալ, երբ քաղաքացիների իրավունքները պատշաճ չեն պարզաբանվել: Հաճախ բլանկները դնում են քաղաացու դիմաց ու ասում, թե որտեղ պիտի ստորագրեն: Ցավոք, կա նաև քաղաքացիների ցածր իրավագիտակցության խնդիր, ինչից էլ շատ դեպքերում օգտվում է իրավապահները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })